ՀՀ առողջապահության նախարարությանն առընթեր 4-րդ գլխավոր վարչությունը տեղեկացնում է, որ ս. թ. հուլիս ամսից գործելու են նրա ենթակայության տակ գտնվող «Արզնի», «Հանքավան», «Ջերմուկ», Դիլիջանի «Լեռնային Հայաստան» եւ «Կապուտակ Սեւան» առողջարանները:

Ուղեգրերը վաճառվելու են մատչելի գներով ինչպես կանխիկ գումարով, այնպես էլ փոխանցման կարգով:

Մասնավոր անձիք եւ կազմակերպությունները, որոնք կգնեն ուղեգրերը ս. թ. ապրիլ-մայիս ամսին հուլիս, օգոստոս եւ սեպտեմբեր ամիսների համար կօգտվեն արտոնություններից:



Զանգահարեք մեզ հետեւյալ հեռախոսահամարներով՝
53-76-03, 53-18-82, 53-65-22
ժամը 10:00 մինչեւ 15:00:

ՀՀ առողջապահության նախարարությանն առընթեր 4-րդ գլխավոր վարչության ադմինիստրացիա


# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
# AMERICAN UNIVERSITY OF ARMENIA

**Ճարտարագիտության, գործարարության, քաղաքագիտության մագիստրոսի կոչումներ**

Հայաստանի Ամերիկյան Համալսարանը սկսում է 1995-1996 ուսումնական տարվա դիմորդների փաստաթղթերի ընդունումը: Ընդունելությունը կազմակերպվում է արդյունաբերական ճարտարագիտության, սեյսմիկ ճարտարագիտության, գործարար ղեկավարման եւ քաղաքագիտության մասնագիտությունների գծով: Դիմորդները պետք է ունենան համապատասխան բնագավառի բարձրագույն կրթություն մաթեմատիկա, տնտեսագիտություն, ճարտարագիտություն MBA **աստիճանի համար**. քաղաքացիական շինարարություն կամ մեխանիկա **սեյսմիկ ճարտարագիտության** M.Eng. աստիճանի համար. ճարտարագիտություն, մաթեմատիկա, մեխանիկա **արդյունաբերական ճարտարագիտության** M. Eng. աստիճանի համար. պատմություն, իրավագիտություն, լեզուներ կամ հասարակական գիտությունների այլ բնագավառներ **քաղաքագիտության** MA աստիճանի համար:

**Անգլերեն լեզվի իմացությունը պարտադիր է:**

**Դիմորդները պետք է ներկայացնեն**

- Դիպլոմի եւ ներդիրի օրինակներ՝ իրենց պատճեններով
- Երեք բնութագիր նամակ, տեղում լրացնեն դիմումնագիր եւ ֆինանսական հնարավորությունների մասին տեղեկանք:

Փաստաթղթերի ընդունման համար կանխավճարի դրամով կազմում է ԱՄՆ 5 դոլլարին համարժեք գումար, որը պետք է մուծել փաստաթղթերը հանձնելիս:

Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետը 1995 թ. ապրիլի 28-ն է:

Դիմորդները 1995 թ. մայիսին կհանձնեն անգլերեն լեզվի կարգորոշիչ քննություն:

Հիմնական ծրագրում վերջնական ընդունելությունը կկատարվի դիպլոմի ներդիրի միջին ցուցանիշի, նախապատրաստական փուլում դիմորդների հաջողությունների եւ տվյալ ծրագրի համար անհրաժեշտ բնագավառի քննական արդյունքների հիման վրա (GMAT կամ GRE):

Ուսման տեւողությունը հիմնական ծրագրի համար երկու տարի է:

*Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀԱՀ-ի Ընդունելության գրասենյակ: Հասցե՝ Մարշալ Բաղրամյան 40, առաջին հարկ, 19 սենյակ, հեռախոս 27-10-85:*

ՀԱՀ-ը ռասայական, կրոնական, սեռական կամ ազգային խտրականություն չի ճանաչում



## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՕՐԵՐ

3-5 ապրիլի 1995 թ.
8-12 մայիսի 1995 թ.

3 ամսականից մինչեւ 5 տարեկան երեխաների պատվաստում




ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
UNICEF
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԲՈԼՈՐ ԾՆՈՂՆԵՐԻՆ, ԵԹԵ ՈՒԶՈՒՄ ԵՔ ՁԵՐ ԵՐԵԽԱՆ ԱՌՈՂՋ ԼԻՆԻ, ԱՆՊԱՅՄԱՆ՝ ՏԱՐԵՔ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ



**Լույս է տեսել**

# ՍՓՅՈՒՌ

ՏԵՂԵԿԱՏՈՒԻ

*կողմից հրատարակվող*
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳՐՔԻ
*1995 թ. № 1 թողարկումը*

A STYLE

*Ցանկացողներին տեղեկագիրը կուղարկվի իրենց նշված հասցեով:*

*Զանգահարել՝*
**58 13 51, 58 91 67.**



## ԳՆՈՒՄ ԵՆՔ

*Ֆրանսիական օծանելիքներ եւ ատտիորտիշներ (դեզոդորներ): Հեռախոսներ՝ 527137, 614602:*



## ВНИМАНИЕ

Аппарат председателя Ардшинбанка сообщает своим акционерам, что ежегодное собрание акционеров Ардшинбанка состоится 15 апреля с. г. в актовом зале Американского Университета Армении по адресу Баграмяна 40.

Регистрация состоится в 10:00, начало в 11:30.

С 5 апреля акционеры могут получить пригласительные билеты в своих отделениях Ардшинбанка.

По вопросам организации собрания обращаться по тел. 56-71-39.



# ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ցանկանում եմ վարձել երեք սենյականոց բնակարան, բոլոր հարմարություններով, հեռախոսով, վերանորոգված, քաղաքի կենտրոնում:
Զանգահարել՝
569-806 հեռախոսահամարով:



# Վ Ա Ճ Ա Ռ Վ Ո Ւ Մ Է

երկու առանձնատուն,
250 քմ ընդհանուր
տնամերձ հողամասով
«Զվարթնոց»
կինոթատրոնի մոտակայքում:
Զանգահարել 58-33-26, 25-25-38



# «ԱՐԱՐԱՏ-ԼԱԴԱ»

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Արարատ-Լադա» բաժնետիրական ընկերությունը 15-րդ թաղամասի ավտոտեխսպասարկման բակում ապրիլի 1-ից կազմակերպվել է ամենօրյա տոնավաճառ:

Վաճառատեղերի վճարը մյուս տոնավաճառների համեմատ էժան է 50 տոկոսով.

երաշխավորվում է հաճախորդների եւ ապրանքների անվտանգությունը:

## ՀՐԱՎԻՐՈՒՄ ԵՆՔ ԳՆՈՒՄՆԵՐԻ



# ԲՐԱԲԻՈՆ ՖԼՈՐԱ ՍԵՐՎԻՍ

Ապրիլի 7-ից «ԲՐԱԲԻՈՆ ՖԼՈՐԱ ՍԵՐՎԻՍՈՒՄ» ծաղիկների գները՝

| | | | |
|---|---|---|---|
| նարգիզ | 10 դրամ | բրիզանթեմ | 800 դրամ |
| պատկառուկ (միմոզա) | 50 դրամ | կլիենի նաեւ | |
| մեխակ | 150 դրամ | շուշան | |
| հիրիկ | 250 դրամ | դրախտի թռչուն (ստրիլեցիա) | |
| փողաշուշան (կալա) | 350 դրամ | արքայանարգիզ (ամարիլիս) | |
| վարդ | 400, 900, 1200 դրամ | անտուրիում | |
| խոլորձ (օրխիդեյա) | 300, 600 դրամ | բրաշուշան (գլադիոլուս) | |
| գիպսոֆիլա | 700 դրամ | վարդակակաչ | |



Ծաղկեփնջերի հետ անվճար կտրվեն ծաղիկների կյանքը երկարացնող դեղամիջոցներ:
եւ ինչպես միշտ յուրաքանչյուր 100-րդ գնորդ սպասարկվում է անվճար:


«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան 23, Արշակունյաց 2. Գրանցման թիվ 65. Պատվեր 69149. Պատվեր 1813 Տպաքանակը 7000 Ստորագրված է տպագրության՝ 3. 04. 1995 Գինը 40 դրամ

digitised by A.R.A.R.@